ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ
10 դեկտեմբերի 2021 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 12
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Նիստը վարում էր Մեղրի համայնքի ղեկավար Բ. Զաքարյանը:
Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղարի ժ/պ Ա. Նավասարդյանը:

Մասնակցում էին համայնքի ավագանու 15 անդամներից 14-ը՝ Ս.Ադամյանը, Ա.Աղամալյանը, Խ.Անդրեասյանը, Ա.Բաղդասարյանը, Ա.Գրիգորյանը, Բ.Զաքարյանը, Ա.Թումանյանը, Ա.Հայրապետյանը, Մ.Հովհաննիսյանը, Ա.Մաթևոսյանը, Մ.Միքաելյանը, Վ.Միքայելյանը, Ն.Նավասարդյանը, Ա.Ստեփանյանը:
Շ.Մինասյանը ներկա չէր նիստին՝ քաղաքից բացակայելու պատճառով:

ԼՍԵՑ - *ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

/Զեկ. ԲԱԳՐԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ավագանու անդամները օրակարգի նախագծի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունեին, առաջարկեցին առանց փոփոխությունների և լրացումների ընդունել այն:
ՈՐՈՇԵՑ - Հաստատել Մեղրի համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 10-ի N12 հերթական նիստի օրակարգը:

ՕՐԱԿԱՐԳ

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու կանոնակարգը հաստատելու և Մեղրի համայնքի ավագանու 2016 թվականի սեպտեմբերի 29-ի N2-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին.
2.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու մշտական հանձնաժողովներ ստեղծելու, դրանց անհատական կազմը հաստատելու և Մեղրի համայնքի ավագանու 2017 թվականի հուլիսի 19-ի N75-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին.
3.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմում ավագանու անդամների քանակական և անհատական կազմը հաստատելու և Մեղրի համայնքի ավագանու 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N13-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին.
4.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և

աշխատանային դրույքաչափերը հաստատելու և Մեղրի համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N93 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին.
5.«Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրիի համայքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրությունը հաստատելու և Մեղրի համայնքի ավագանու 2016 թվականի սեպտեմբերի 29-ի N 8-ն որոշման 2-րդ կետը ուժը կորցրած ճանաչելու մասին.
6.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու առաջին նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ- կողմ - 14
դեմ - 0
ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն

ԱՌԱՋ- ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 29-Ի N2-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ԲԱԳՐԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ավագանու անդամ Ա. Հայրապետյանը նախագծի վերաբերյալ ներկայացրել էր 8 առաջարկություն, ըստ որի առաջարկվում էր Մեղրի համայնքի ավագանու կանոնակարգում կատարել փոփոխություններ: Առաջարկություններից 6-ը ընդունվեց և կատարվեց համապատասխան փոփոխությունները կանոնակարգում:
ՈՐՈՇԵՑ - Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2016 թվականի սեպտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու կանոնակարգը հաստատելու մասին» N2-Ն որոշումը և ընդունել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ - 14
դեմ - 0
ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն

ԱՌԱՋ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԴՐԱՆՑ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 19-Ի N75-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ԲԱԳՐԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ավագանու անդամ Ա. Հայրապետյանն առաջարկեց, որ յուրաքանչյուր խմբակցություն առաջադրի անդամներ՝ իրենց նախընտրած հանձնաժողովներում ընդգրկվելու համար, որից հետո ձևավորված հանձնաժողովի անդամներն ընտրեն տվյալ հանձնաժողովի նախագահին:

ՈՐՈՇԵՑ - 1.Ստեղծել ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու մշտական գործող 3 հանձնաժողով՝

1)Տնտեսական և տնտեսական հարցերի հանձնաժողով, հաստատել հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն հավելված 1-ի

2)Մշակույթի, կրթության, սպորտի, սոցիալական հարցերի, առողջապահական, պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության հարցերով հանձնաժողով, հաստատել հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն հավելված 2-ի:

3)Քաղաքաշինության և հողօգտագործման, իրավական և ենթակառուցվածքներին առնչվող հարցերի հանձնաժողով, հաստատել հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն հավելված 3-ի:

2.Ուժը կորցրած ճանաչել Մեղրի համայնքի ավագանու 2017 թվականի հուլիսի 19-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու մշտական հանձնաժողովներ ստեղծելու և դրանց անհատական կազմը հաստատելու մասին» N75-Ա որոշումը:

3.Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ- կողմ - 14
դեմ - 0
ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն

ԼՍԵՑ- ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N13-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ԲԱԳՐԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ավագանու անդամ Ա. Թումանյանը նախագծի վերաբերյալ ներկայացրեց առաջարկություն՝ հանձնաժողովի կազմի մեջ ընդգրկել յուրաքանչյուր խմբակցությունից մեկական անդամ:

ՈՐՈՇԵՑ - 1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմում ընդգրկել ավագանու հինգ անդամ:

2.Հաստատել հանձնաժողովներում ընդգրկվող համայնքի ավագանու անդամների անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:

3.Ուժը կորցրած ճանաչել Մեղրի համայնքի ավագանու 2016 թվականի հոկտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմում ավագանու անդամների քանակական և անհատական կազմը հաստատելու մասին» N13-Ա որոշումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ- կողմ - 8
դեմ - 5
ձեռնպահ - 1

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑ- ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N93 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ԲԱԳՐԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ավագանու անդամ Ա. Հայրապետյանը Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի վերաբերյալ պահանջեց պարզաբանումներ, որին տրվեց հստակ բացատրություններ համայնքի ղեկավարի կողմից:

ՈՐՈՇԵՑ - 1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը՝ համաձայն N1 հավելվածի:

2.Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N2 հավելվածի:

3.Հաստիքացուցակի համայնքային ծառայության պաշտոնների մասով համապատասխան փոփոխությունները ուժի մեջ են մտնում ՀՀ լիազորած պետական կառավարման մարմնի կողմից համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

4.Ուժը կորցրած ճանաչել Մեղրի համայնքի ավագանու 2016 թվականի սեպտեմբերի 29-ի ««Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ հիմնադրելու, «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրիի համայքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու մասին» N8-Ն որոշման 3-րդ կետը:

5.Սույն որոշումը ուժի մեջ մտնելու պահից «Մեղրի համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանելու, «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի աշխատողների քանակը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Մեղրի համայնքի ավագանու 2019 թվականի հուլիսի 12-ի N 40 որոշումն մասնակի ուժը կորցրած ճանաչելու մասին» N 93 որոշումը Սույն որոշումը ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել Մեղրի համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 26-ի «Մեղրի համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանելու, «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի աշխատողների քանակը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Մեղրի համայնքի ավագանու 2019 թվականի հուլիսի 12-ի N 40 որոշումն մասնակի ուժը կորցրած ճանաչելու մասին» N 93 որոշումը հետագա փոփոխություններով և լրացումներով հանդերձ:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ- կողմ - 9
դեմ - 5
ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑ - «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻԻ ՀԱՄԱՅՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 29-Ի N8-Ն ՈՐՈՇՄԱՆ 2-ՐԴ ԿԵՏԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԲԱԳՐԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ավագանու անդամները նախագծի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունեին, առաջարկվեց առանց փոփոխությունների և լրացումների ընդունել այն:

ՈՐՈՇԵՑ - 1.Հաստատել «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

2.ՈՒԺը կորցրած ճանաչել Մեղրի համայնքի ավագանու 2016 թվականի սեպտեմբերի 29-ի ««Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ հիմնադրելու, «Հայաստանի հանրապետության Սյունիքի մարզի Մեղրիի համայքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու մասին» N8-Ն որոշման 2-րդ կետը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ- կողմ - 8
դեմ - 0
ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑ- *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

/Զեկ. ԲԱԳՐԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Նախագծի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չկային, առաջարկվեց առանց փոփոխությունների և լրացումների ընդունել այն:

ՈՐՈՇԵՑ - 1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու առաջին նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2021 թվականի դեկտեմբերի 28-ը՝ ժամը 15:00:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ- կողմ - 8
դեմ - 0
ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց

Ավագանու անդամներ՝

ԶԱՔԱՐՅԱՆ ԲԱԳՐԱՏ

ԱԴԱՄՅԱՆ ՍՈՆԱ

ԱՂԱՄԱԼՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՐՏՈՒՐ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ԹՈՒՄԱՆՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԱՐՈՒՍՅԱ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԱՐՏՈՒՇ

ՄԻՔԱԵԼՅԱՆ ՄԱՐՅԱՄ

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՎԵՐՈՆԻԿԱ

ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐԵՎԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Բ. ԶԱՔԱՐՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՂ՝ Ա. ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

2021թ. դեկտեմբերի 10
ք.Մեղրի